

Խ. ԱՐԴՅՈՅՆ

Դ. ԳԵՐԻՐՁՅԱՆԻ ՄԱՆՐԱՊԱՏՈՒԽՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Յանենձատիս Հայկական ԱՍՏ Գրտուքյունների Ակադեմիայի 1947 թ.

№ 1 «Տեղեկագրից»

891.99(09) [Արտադրության] 37865

Ա-55 Անդրավան, Խ.

Դ. Դեմքը Ես անձինչ եմ անձինչ:

16	19/x	11
	30/x/y	381

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ

1947, № 1

Общественные науки

891.99.092 [Դեմքայական]

4-35

Խ. Սարգսյան

A 3/668

Դ. ԴԵՄՔԱՅԱԿԱՆԻ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա. Ֆադեևը իր «Ընկ. Ա. Ա. Ժդանովի զեկուցումը և մեր մոտակա խնդիրները» զեկուցման մեջ ՍՍՌՄ Սովորական Գրողների Միության պարտիական դռնբաց ժողովում¹ ասում է. «Էպոխայի հիմնական կոնֆլիկտը, նորի, սոցիալիստականի կոնֆլիկտը հնի, ապրած գնացածի միջև ընդունում է ամենաբարձրագան ձևեր»:

Թե իր զեկուցման և թե «Լիտ. գազետա»-ում զետեղած նամակ խմբագրության մեջ՝ ֆադեևը նման կոնֆլիկտի արտահայտության մի քանի օրինակներ է բերում առևս սովետական գրականությունից:

«Բերգսոնյան-ֆրեյդական հայացքները,—ասում է Ֆադեևը,—բացահայտքեն խանգարում էին սովետական այնպիսի տաղանդավոր գրովի զարգացմանը, ինչպիսին է Վուելուող հվանովը Նրա «Գաղտնիք դադարյաց» գիրքը հավաստում էր ենթագիտակցական սկզբունքի պրիմատը մարդկային գործունեության մեջ։ Գրում բացակայում էր հասարակական զարգացման օրենքների սրբունումը. գիրքը պարզապես բացասում էր դրանք»։

«Նիշշենի և Բերգսոնի ազգեցությունը,—շարունակում է նա,—ժամանակակից արևմտա-եվրոպական գրականության միջով բեկված՝ մեր կյանքից իմաստ հեռու տարավ գրող Օլեշային և հասցրեց նրան պերմանենա ճգնաժամի»։

Մական ամենից հետաքրքիրն այն է, թե ինչպես է բնութագրում Ֆադեևը Սելվինսկու ստեղծագործությունը. «Ես խիստ քննադատել եմ,—ասում նա,—ի. Սելվինսկու նախկին գործերը («Ուլյալիևշինա», «Պառ-Պառ», «Բանաստեղծի գրառումները», լիրիկական առանձին բանաստեղծությունները), որոնց մեջ քաղաքական կոպիտ սխալներ կան, որոնց մեջ զդացվում է սովետական աշխարհայեցությանը խորթ ու թշնամի նիշշենական-բերգսոնական հայացքների ազգեցությունը և դրական դեկանակի չեղթահարված ազգեցությունները։ Այդ քննադատության խստությունը նրանից է առաջանում, որ Սելվինսկու առանձին բանաստեղծություններում պատերազմից առաջ և մինչև անգամ պատերազմի ժամանակ նորից արտահայտվեցին այդ ազգեցությունները։ Բայց ես չեմ քննադատել Սելվինսկու ստեղծագործությունը ամբողջությամբ, քանի որ թե մինչև պատերազմը և թե առանձնապես պատերազմից հետո նա ստեղծել է օգտակար և տաղանդավոր սովետական գործեր։ Ես խոսել եմ այն մասին, որ Սելվինսկու ստեղծագործությունը նշանակալիորեն կառաջադիմեր, եթե նա հասկանար իր մի շարք նախկին գործերի սխալական լինելն ու վասակարությունը և չկառչեր նրանց»։

1. «Լիտ. գազետա», 1946, № 42.

2. «Լիտ. գազետա», 1946, № 43.

Թե հրքան կենսունակ են հին ու խորթ հասկացողությունները, որքան դեռ մենք լրէվ արմատախիլ չենք արել մեր գիտակցությունից կապիտալիստական հասարակակարգից ներշնչված մտայնության հետքերը, ցույց է տալիս Վ. Գրոսմանի օրինակը, որ Հայրենական պատերազմի օրերին այնպիսի փայլուն գործ տալով, ինչպիսին են ստալինյանքրադյան ակնարկները կամ էլ «ժողովուրդը անմահ է» վեպը, պատերազմից հետո հրատարակեց պատերազմից առաջ գրած իր «Եթե հավատանք պիթագորեականներին» պիեսը, որտեղ—ինչպիս նշեց քննադատությունը—սովետական աշխարհայեցողության համար անընդունելի այն միտքն է հայտնում, իբր կյանքում և պատմության մեջ ամեն ինչ կրկնվում է, ամեն ինչ ավարտվելով՝ նորից է սկսվում, մարդկությունը ոչ թե առաջադիմում է, այլ ցեկվելի, իրար հար ու նժան շրջաններ է կատարում:

Հնի և նորի կոնֆլիկտը, որ—ինչպես տեսանք—այնքան ցայտուն գրսերում է Ֆաղենը Վսեվոլուդ Իվանովի, Օլեշայի և Սելինսկու ստեղծագործություններում, որ ուժեղ արտահայտվում է Վ. Գրոսմանի գործերում, նկատելի է նաև հայ սովետական գրականության մեջ: Այս տեսանկյունով թույլ ենք տալիս մեզ կանգ առնել մեր խոշորագույն գրող Դերենիկ Դեմիրճյանի մի քանի գործերի վրա, մասնավորապես նրա մանրապատումների վրա, որոնք գրված են գերազանցորեն Հայրենական Մեծ պատերազմի օրերին:

«Մանրապատումները»—դա հեղինակի խոհերն են, զրույցը ինքն իր հետ: Բայց քանի որ տպագրվել են—դա իրավունք է տալիս մեզ ականջ դնելու նրանց, լսելու և քննելու հեղինակի խոստովանությունները:

Սակայն մինչ այդ մենք կարող ենք համարում վերհիշել նրա մի այլ խոստովանությունը, որ գրված է շատ առաջ, 10-ական թվականներին, նրա «Ձութակ և սրինգ» շատ բնորոշ ու հետաքրքրական գործը:

Ի՞նչ փիլիսոփայություն է արձարծում Դերենիկ Դեմիրճյանն իր այս գործում:

Իսկական արվեստը, իսկական ստեղծագործությունը ելնում է ցավից, տանջանքից, մահվանից: Ով սիրում է տառապանքի այդ արվեստը, նաուրիշ բան չպիտի սիրե, չի կարող սիրել ու չարժե, որ սիրե: Նա երջանիկ կլինի իր արվեստում ու թշվառ՝ կյանքի մեջ:

Ամենամեծ ճշմարտությունը տառապանքն է: Իսկական արվեստը, բարձր արվեստը հենց այդ տառապանքի մարմնավորումն է, ու այդ արվեստը մերժում է կյանքը, հակազրվում նրան: Տառապանքն ու մահն են միայն լուրջ, իմաստալից, խորապես մարդկային—այս է բացահայտում նաև կերպարը, կյանքը թեթեամիտ է ու մակերեսային—այս են բացահայտում հայանթու ու Լակմեի կերպարները:

Սա տանջված մարդու փիլիսոփայություն է: Սա գեղարվեստորեն խտացած փաստաթուղթ է մի մարդու, որ սիրում է մարդուն, բայց անկարող է նրան օգնել, գուրս քաշել նրան տառապանքի այն ծովից, որում նա խիզգվում է հասարակական հոսի իրադրության հետեանքով, ու նա աստվածացնում է այդ տառապանքը, համարում այն կեցության գերադույն արտահայտություն, տանջվում մենակության ու հոռետեսության մեջ և կյանքից կատարելապես կտրված՝ արվեստի մեջ գտնում իր միակ սփոփանքը:

Իհարկե, սա ելքի ճանապարհը չէր։ Մեզ հայտնի է իսկական ճանապարհ, Մաքսիմ Գորկու ճանապարհը, հասարակության արժատական վերափոխման ու կյանքի հաստատման ճանապարհը, պրոլետարական գրականության ու սոցիալիստական ռեալիզմի մեթոդի արձարձման ու ծավալման ճանապարհը, որ հասցեց մեզ այսօրվա մեծ Նվաճումներին գրականության ու արվեստի ասպարեզում։

Բայց մենք նկատի ենք առնում Դեմիրճյանի այս ապրումներն ու պրոնումները, նամանավանդ որ հեղինակը իր ստեղծագործության այս երակի հետ միասին, «Ըութակ և սրինգ»-ի ու «Կյանքի տեսլի»-ի հետ միասին ուներ նաև ներշնչան մի այլ աղբյուր, առողջ ու առնացի, որ ենում էր ժողովրդից, մնվում էր հայրենասիրությամբ, որ ավեց «Անկթեմուր» գործը, իսկ հետագայում, Հոկտեմբերյան ռեռուցիայից հետո, առավել մեծ ու հասուն գործեր։

Հիմա հարց առնք սեղ. համահնչյան կլինի արդյոք մեր օրերին, երբ մենք՝ օղակված սովի միջաներով՝ հաղթանակեցինք քաղաքացիական պատերազմի տարիներին, երբ մենք՝ շալակներիս առաջին իմակերիալիստական պատերազմից ժառանգություն մնացած անտեսական ծայրահեղ քայլքայումը՝ մեծագույն հաջողությամբ քոնկցինք երկրի ինդուստրացման ուղին, երբ մենք համարյա մենամենակ դուրս եկանք այնպիսի զարհուրելի հակառակորդի գեմ, ինչպիսին էր գերմանական ֆաշիզմը, ու հաղթեցինք—համահնչյան կլինի արդյոք այս օրերին, եթե մենք լսենք Դեմիրճյանի ստեղծագործություններում «Զութակ և սրինգ»-ի արամագրությունների թեկուց հեռավոր արձագանքները։

Իհարկե, ոչ, Բայց դժբախտաբար զրանք կան, գոյություն ունեն։

Վերցնենք, օրինակի համար, «Անցյալի հուշեր» մանրապատռմը:¹ Այս գործում Դեմիրճյանը պատկերում է մի երաժշտի, որ հրաշալի հիշողություն ունի, բայց այդ հիշողությունը պահում է միայն վատը, բացասականը։ Երբ երաժշտին հարց են տալիս՝ միթե ձեր ուժեղ հիշողությունը դառն առ տիսուր գեղգերի հետ միասին չի զարթեցնում ձեր հոգում նաև պայծառ անցքեր, ուրախ ժամեր—նա պատասխանում է. «Ա՛խ, տիսուր, վիշավորիչ, տեղեղ գեղգերի հուշերը թունավորում են բոլոր պայծառն ու գեղցեցիկը։ Վիշառ, վատը ուժեղ են տպագործում, վերքը սպիներ է թողնում, մինչ ուրախությունը ցնում է արել շողքի պես անհետ ու անվերադարձ։

Միթե մենք չենք կարող ասել, որ Նախ ու Հայանթին նորից պատկերվում են մեր առջև—տառապանքը տպավորիչ է ու խոր հետքեր է թողնում, ուրախությունը մակերեսային է ու ծխի պես ցրվող։ Չենք կարող ասել, որ Դեմիրճյանը նորից կյանք է ուզում առաջ իր՝ տառապանքը կեցության ամենաբարձր արտահայտությունն է պիկլսովայությանը։ Իհարկե, կարող ենք, բայց այդ ամենը մեր օրերում, ընդունել է արդեն պարօւնագիկ բնույթի եվ իսկապես. այն սփոփանքը, որ ուներ Նալի, այն է՝ չընադ, հոգեցունց նվագ, այդ սփոփանքը մենք չենք տեսնում, որ ունենա Նալի մեր այս էպիգոնը, որի հիշողությունը, իր մեջ առնելով միայն վատն ու բացասականը, անհունորեն պիտի ճնշեր նրա ողջ գիտակցությունը, ցնցեր նրա հոգին ու մի գեղցեցիկ օր խելագարության դուռը հասցներ նրան։

1 Գ. Գևորգյան, Երկեր, Ա. հատոր, Երևան, 1946, էջ 364։

Եթե տառապանքն է իրականը, սեպագիր արձանագրությունների պես հավիտենականը, ապա մահվան գերիշխանությունը պիտի լինի դրանից տրամաբանորեն հետևող արգյունք:

«Լուսանկար» մանրապատումի մեջ՝ Դեմիրճյանը պատմում է, թե ինչպես մեկը, այցելելով իր լուսանկարչունի բարեկամունքուն, դիտում է նրա ընդունարանում պատից կախած լուսանկարները ու մեխում մի կող արտակարգ գրավիչ գեմքի առջև։ «Ես այնպիս զգացի, —պատմում է Դեմիրճյանը, —որ նրա հետ կարելի էր դիմանալ կյանքի բոլոր ձախորդություններին։ Նրա հետ կարելի էր ստեղծագործել, տանել պայքարի բարորդը պերիպետիաները։ Նրա հետ կարելի էր աշխարհն ըմբռնել իր ողջ խորությամբ։ Տիուր օրեր չեին լինի։ Նա ինքը մի անսպառ ուրախություն կլիներ... Եվ ինչ կլինի՝ եթե պատահեմ նրան... Հը...»։

Պարզ է միանգամայն, որ լուսանկարչունու բարեկամը որո՞նել էր կյանքում, իրականության մեջ մի այդպիսի կնոջ ու չեր գտել և այժմ տեսնչում էր նրան, անչում էր, որպեսզի նրանով լցնի իր կյանքի բացը, անգունդը։ Բայց...անողոք են, ըստ Դեմիրճյանի, մահվան ու կենաց օրենքները, մահն ավելի ուժեղ է, քան կյանքը, կյանքը չի կարելի վայելել պատրանքի մեջ անգամ, որ այդքան հմայիչ ու կախարդական զրոյմվել էր լուսանկարի վրա։ Պարզում է, որ այդ կինը... մեռած է. մահվան իսկապես որ «Երկաթե վարագույրը» նորից իջնում է, ամեն ինչ ծածկում, բուլոր ուղիները փակում։ Լուսանկարչունու բարեկամը նույն դժբախտ նաև է, միայն փողկապ հագած։

Այն, ինչ հնանում է, քայքայվում, վերանում, մահանում, —այն պատականում է անցյալին։ մահը անցյալ է։ Այն, ինչ բողոքում է, կրում է իր մեջ փթթվելու պոտենցիա, կենսատու ճյուղեր արձակում, —այն պատկանում է ապագային։ Կյանքը ապագա է։ Դեմիրճյանը համաձայն չէ այս դատողությունների հետ ու ամեն ինչ դարձնում է համատարած մահ։

Վերցնենք նրա «Եքսպոնատներ» մանրապատումը² Այս մանրապատումի հերոսը թանգարանի վարիչ է։ Տարիների ընթացքում գործ ունենալով էքսպոնատների հետ, նա եկել էր այն եղրակացության, թի ռամեն, ամեն բան պիտի անցնի, գնա թանգարան, դառնա ցուցաններների էքսպոնատ և քարանա...»։ «Եվ այդպիս վարվելով իրերի, դոկումենտների հետ, —շարունակում է Դեմիրճյանը, —կամաց-կամաց այդպիս էլ սովորել է նաև շուրջն ապրող կենդանի մարդկանց։ Անցնում են նրանք, դառնաւմ թանգարանային էքսպոնատ...»։

Խղճալ միայն կարելի է այն կենդանի մարդկանց, որոնք ընկնում են մեր թանգարանի վարիչի տեսադաշտը. գեռ մինչև մահ նրանք մեռած են արդեն։ Դեմիրճյանի հերոսը մեռած իրերին ոչ թե կյանք է տալիս —ինչպես նա պիտի վարվեր—այլ, ընդհակառակն, կյանքը ենթարկում է այդ մեռած իրերին։

Նույն անում է Դեմիրճյանը նաև «Թանգարանի նյութեր» պատվածքում,³ ուր նա հիպոստացնում է այդ իրերը, ինքնանպատակ արժեք տալիս նրանց—ու միաժամանակ ոչնչացնում կյանքը,

¹ Անդ, էջ 257։

² Անդ, էջ 302։

³ Անդ, էջ 348—352։

Բայց տեսնենք ինչնվ են վերջանում թանգարանի վարչչի խոհերը։ «Նրա ապագան անցյալն է, ասում է Դեմիրճյանը, անցյալ կառարյալը։ Իսկապես որ ծանր կայության մեջ ընկանք մենք մենք երազում ենք, որ ապագայում հեքիաթային նվաճություն ենք ունենալու, անհունորեն գեղցցկացնելու ենք մեր կյանքը—գուրս է գալիս, որ այդ երազները ավելորդ են, ավելորդ են այն ծիգերը, որ թափում ենք մանք հանուն ապագայի, որովհետև այդ ապագան—ինչպես հավատացնում է մեզ Դեմիրճյանը—այդ ապագան արգեն լրիվ պարփակված է անցյալի մեջ...»

Բայց փիլիսոփա վարչը այստեղ կանգ չի անում։ «Թռչում է մըսաքով նա, —շարունակում է Դեմիրճյանը, —զեպի այդ ապագայի գիրկը։ Եվ ինչ ...Ամեն, ամեն ինչ այստեղ էլ անցել է արդին, դպել անդջոտ հուշ...» Այդպիսով, ամեն ինչ դադարում է գոյություն ունենալը անգամ մահը, ամեն ինչ երազ է, առավոտյան շամանդար։

Հին ժամանակներում իղեալիստ փիլիսոփաները շատ սիրում էին դատել սոլիպսիզմի մասին ու խոսելով նրա ծայլահեղ արտահայտության մասին, —երբ ժխտվում էր ոչ միայն ամբողջ աշխարհը բացառությամբ ես-ի, այլ հենց այդ ես-ը—կես-ըուրջ, կես-կատակով անվանում նման «վարդապետությունը» նույլիպսիզմ։ Մեր օրերին, Հայրենական Մեծ պատերազմի ու երկրի վերականգնման օրերին, Հոկտեմբերյան ռեսուրցիայի 30-րդ տարվա շեմքին, Դեմիրճյանը, զժբախտաբար, դարձել է նման մի «նույլիպսիզմ»։

Գեղարվեստական մտածողությունը պարտիական մտածողություն է, աշխարհի և ոչ մի խորշը նա չեղոք կացության մեջ չի թողնում։ Իսկ ինչու այդպես է վարչում Դեմիրճյանը։ «Մահը» մանրապատումի մեջ՝ նա նկարազրում է մի ֆաշիստ զինվորականի, որը մահ է երազել միայն ու մահ սփոյել իր չորս կողմը, որի մոտոցիկլի կաշվե պատյանի վրա նկարված էր այդ մահվան սիմվոլը—սոկերոտի և գանգու եվ ահա այդ ֆաշիստը իր արդարացի հատուցումն է ստանում Ռուսաստանի լայնատարած տափաստաններում, այսինքն սպանվում։ «Բայց մահը,—ասում է Դեմիրճյանը, —որ նա գտել է՝ այնպես չէ այլանդակ ու չար, ինչպես նկարված է նրա մեքենայի պատյանին։ Ոչ իսկական մահը—ավելի գթառատ, քան ինքը—մի խաղաղություն է գրոշմել նրա դեմքին և հանգիստ փակել է նրա առանչքը»։

Այս խոսքերը միանգամայն անհանդուրժելի են։ Մենք չէինք հաղթանակի Հայրենական պատերազմի օրերին, եթե մահվան մեջ անգամ չոչընչացնեինք մեր թշնամիներին։ Իսկ Դեմիրճյանը փրկում է նրանց մահվան մեջ։ Ինչպես կարելի է զթի մասին խոսել մարդկության ոխերիմ թշնամիներին ոչչացնելու պահին։ «Մահը խաղաղություն է գրոշմել նրա դեմքին...» Ի՞նչպես պատահեց, որ Դեմիրճյանը հրեշտակացըրեց արյունուղղաց Փաշիստին, գեկաղանսի մը արսենալից նա վերցրեց մահվան այդ բարի, գթառատ, ճերմակազգեստ կերպարը։

Սակայն Դեմիրճյանը մեզ կարող է առարկել ինչու դուք միակողմանի եք դատում, ապա մի վերցրեք «Մահը» մանրապատումին անմիջապես

Նախորդող «Աշուն» մանրապատռումը ու կտեսնեք, որ այնտեղ այլ բան է ասված:

Դեմիրճյանը միանգամայն իրավացի է: «Աշուն» մանրապատռումի¹ հերոսունին մի գերմանունի է, որ իր բնակարանի միջանցքում ունաձայն լսելով, ենթադրում է, իրը դա փոստատարը պիտի լինի, ձեռքին՝ թուսաստանում գտնվող իր ամուսնուց մի ծանրոց, մեջը լիքը ադամանդներով մուշտակներով—ու մետաքսով—ու այդ ամենի փոխարեն ստանում է ամուսնու գերեզմանի լուսանկարը: «Հողի ծանր, անձունի մի կույտ է ուռել հեռավոր այն երկիրի գետնի երեսին, —նկարագրում է Դեմիրճյանը: Մի անսերդաշնակ փայտե խաչ անխնամ, հապճեպ հյուսնաձ՝ խրվել է այդ կոշտերի մեջ և մի սառ սաղավարտ կոշմարային կրիայի պես կծկվել է խառչի տակ...»

Ահա թե ինչպես պիտի նկարագրել ֆաշիստի մահը, Հոդս է ցնդել մահվան խաղաղարար հրեշտակը: Դրա փոխարեն խստահայաց, բայց ճշմարիտ իրականություն: Հողի անձունի կույտ, աններդաշնակ խաչ, սառ սաղավարտ, որ Դեմիրճյանը նմանեցնում է «կոշմարային կրիայի»: Հենց այդ «կոշմարային կրիան» բավական է, որպեսզի մենք ասենք, որ Դեմիրճյանը ֆաշիստին մահվան մեջ նորից ոչնչացնում է: Ահա թե որ Դեմիրճյանն է մեզ սիրելի ու ցանկալի:

Հետաքրքր է, թե ինչպես է Դեմիրճյանը լուծում սերունդների հաջորդականության հարցը—չէ՞ որ այստեղ շատ սուր են դրված կյանքի և մահվան փոխարարերության խնդիրները:

«Պառավը մանրապատռումի մեջ՝ Դեմիրճյանը նկարագրում է: «Մի ուրախ պառավ նստել է դռան առջե քարին և զիջին առել մի փոքրիկ երեխա: Թոռն է անշուշտ: Փոքրիկը ձեռները պարզում է, որ բռնի... ծառը, շենքերը, աշխարհը...» Շատ լավ է, ճանաչողության անհուն ծարավն է բնութագրում: «Ու ժամանակում է Դեմիրճյանը: Ժամանակում է և պառավը: Նա երկու ձեռների մատները հագցըել իրավ՝ պինդ բռնել է խայտացող երեխային: Զինսի թե ընկնի: Հրաշալի: անցնող սերնդի հոգաբ գալիք սերունդների մասին: «Ու կպել է նրան,—վերջացնում է Դեմիրճյանը: Ինձ թվում է նա ել կառչել է երեխային... Այնի թե ինքը ընկնի անհուն թյան մեջ...»

Այստեղ արդեն Դեմիրճյանը սայթաքում է: Երեխան չպիտի լինի պառավի համար փրկության խորիսի: Պառավը չպիտի վախենա անէանալուց, այլ ընդհակառակը, իր վարքագծով ցուցաբերի, որ իր անէանալը նախտպայման է նոր ծլած կյանքի առաջնաղացման և բարդավաճման, որ է իսկական անմահություն: Ցորենի հատիկը անէանում է՝ առաջացնելով հասկ: Դեմիրճյանը սայթաքում է, որովհետև կյանքի ու մահվան հակադրության մեջ շեշտը փոխանակ կյանքի վրա դնելու, մահվան վրա է դնում:

Նույնը կատարվում է նաև «Սեղանը» մանրապատռումի մեջ²: Հայրը ասում է իր զավակին՝ «այ, ես որ մեռնեմ՝ իմ այս գրասեղանը քեզ կմնա:

¹ Անդ, էջ 378.

² Անդ, էջ 369.

³ Անդ, էջ 361.

Երեխան անհամբեր ռպասում է, թե երբ, իսկապես, զրասեղանը իրեն կլիա: Ենք որ մեռնեմ»—նորից ասում է նրան հայրը: «Ասում ես, ասում ու չես մեռնում: Բա Երբ պիտի մեռնեմ»—ահա որդու պատասխանը:

Դեմիքճյանը նուրբ մտածող է ու նուրբ գոզացող, բայց այս անգամ նրան թյունը դավաճանել է նրան: Հոր և որդու փոխարարերությունը, որ մեզ համար հաջորդականության կապ է, ըստ որում որդին առավել բարգավաճ վիճակում պիտի շարունակի հոր գործը, Դեմիքճյանը գտեհկացնում է, նյութականացնում, կապում ինչ-որ զրասեղանի հետ, ուշադրությունը սկսում ֆիզիոգիայի, մահվան վրա:

Բայց ինչ ուհակցիա է առաջացնում հոր մեջ որդու անսպասելի ու անգիտակցորեն կոպիտ պատասխանը: Դեմիքճյանը նկարագրում է. «Կլինի, բալիկ ջան, կլինի, — շշնջաց հայրը մեղմ ու խուլ, և թախծալի նայեց մեռնող վերջալույսին, որ խորին արտմությամբ մարում էր լեռների հետևում»:

Պարզ է, որ «մեռնող վերջալույսը» հոր սիմվոլն է, իսկ «խորին արտմությունը»—նրա ապրումները: Իհարկե, ոչ ոք չի ասում, թե մահը հիշելիս կամ մահվան ժամկին պիտի պար գալի Սակայն, մահ կա, որ ամփոփած է իր մեջ, մահ կա, որ գուրս է գալիս իր սահմաններից, պարզում կյանքի որոշը, լցում կատարած գործի վեհության գիտակցությամբ, կտակում այդ գործի շարունակությունը սերունդներին: Դեմիքճյանի մանրապատումի հայրը առաջին տեսակի մահ ընկարողներիցն է, կծկված է իր մեջ, այդ պատճառով էլ այդքան արտմաթափիծ է ըմբռնում վերջալույսը: Մինչդեռ հարկավոր է մի փոքր գուրս գալ վերջալույսի սահմաններից, ու դժվար չի լինի դիտել, որ այն արտմության հետ միասին կրում է իր մեջ նաև խոր բելկրանք—չէ¹՝ որ արեց մարում է իր կենսաբեր ճառագայթները շռայլելուց հետո ցերեկվա ընթացքում, իսկ թախծու վերջալույսին հաջորդում է կայտառ առավոտը:

Ի՞նչ ապրումներ ունի զավակը իր պատասխանից հետո: «Երեխան հուսալից, — ասում է Դեմիքճյանը, — բայց և համակված ինչ-որ վեհ մտքերով, նայեց հորը ու սկսեց երազելու:

Մենք դժվարանում ենք գոշակել, թե որմնք են երեխային համակած «վեհ մտքերը», բայց առանց վրիտելու կարող ենք առել, որ նրա երազները պտտվում են գրասեղանի շուրջը, իսկ այդ կապված է հոր մահվան հետ: Դուրս է գալիս, այդպիսով, որ հայրը ողբում է իր մահը, իսկ զավակը երազում այն: Տիսուր վախճան:

Տեղին է այստեղ վերհիշել Մ. Գորկու հետևյալ խոսքերը. «Ինձ թվում է, որ ես չեմ սիալիպում, նկատելով, որ հայրերը սկսել են ավելի հոգատարությամբ և քնքությամբ վերաբերվել գեափի երեխաները ու դա, ըստ իս, միանգամայն ընական է, որովհետև մարդկության պատմության ամբողջ ընթացքում առաջին անգամն է, ինչ երեխաները հանդիսանում են ոչ թե ծնողների փողի, աների ու կանկարասիքի ժառանգներ, այլ ժառանգներ իսկական և հղոր արժեքի—սոցիալիստական պիտության՝ կառուցված հայրերի և մայրերի աշխատանքով».¹

«Մեծ սիրտը» մանրապատումի մեջ¹ Դեմիքրայանը կարծես ընդհուռալ մոտենում է կյանքի ու մահվան փոխարարեցության խնդրի, հաշորդաւ կանության խնդրի ճիշտ լուծման, հասնում վերջին կետին, բայց սիզի ֆյան աշխատանքը կատարելուց հետո քարաժայը նորից ընկնում է նրա ձեռքից ու թափալուր գահավիժում անդունդ:

Աչա ձեզ անզավակ ամուսիններ, որոնց սպասում էր «խորին ծեռություն, մասյլ տիերություն և մահ», բայց որոնք կարողացան հաղթահարել և մեկը, և՛ մյուսը, և՛ երրորդը ու դա ոչ թե վիտամիններով, հանգային ջրերով կամ կումիսով, այլ պարզապես նրանով, որ որդեգրեցին պատերազմի զոհերի վեց որբ երեխա ու տոմնը լցորին ճռվողյունով և ուրախ հոգսով: «Ծերության մի բոպե իսկ ժամանակ չկա...»—խորիժաստ կերպով ասում է Դեմիքրայանը ու ավելի խորիմաստ ավելացնում: «Մահը, ուր է նա: Թող և նա գա: Նրա համար է՛լ ժամանակ չի լինի...»

Այս, մահվան համար ժամանակ չպիտի մաս, նախորդից հաջորդին անցնելու պահին, հոգեսր ժառանգության հանձնման պահին՝ այն առավել բարձր աստիճանի հասցնելու միտումով, մահը սոսկ մի մոմենտ պիտի լինի, որի տիերությունը սավերի մեջ պիտի ընկնի սերունդների անկանգ բարդավաճման կենտրոնախ հեռանկարի ֆոնում: Այդպիս ենք մտածում մենք:

Այդպես է հենց, կարծես, լուծում խնդիրը նաև Դեմիքրայանը, համենայն դեպս, ամեն ինչ պատրաստ է այդ լուծման համար, սակայն, հանգարծ... ամեն ինչ փոխվում է, փշանում, հոդս ցնդում:

«Եվ ինչ էր դա, որ գառավ գյուտ ծերության և մահի դեմ»—հարց է տալիս նորից Դեմիքրայանը մանրապատումի վերջում: Թվում է, թե պատասխանը արդեն կա, ու դա այն է, որ ծերունիներին դեկավորել է հետագա սերունդին ամբողջովին նվիրվելու գաղափարը: Անը հասարակությանը վեց երիտասարդ և առույդ քաղաքացիներ նվիրելու վեհ գաղափարը: Բայց հչ, այդ չի գյուտը, այլ ինչ որ «Հետնամարել ինառուիցիա և երջանիկ վայրկյան», ինչ որ, «եթե կարելի է այդպես կոչել Մեծ սիրտը»—պատասխանում է Դեմիքրայանը իր իսկ գրած հարցին, շեղվուա ճանապարհից, սթագնում խնդիրը, երեխայի պես շինածը քանուում, ամեն ինչ պարունակում մշուշապատ վերացականությամբ:

Մենք տեսնում ենք, թե ինչպես թպրում է Դեմիքրայանի միտքը, ինչպես նա տառապորմ է ինքն իր ձեռքին: Ու «Ընկերներ» պատմվածքի հեղինակը, այն հեղինակը, որին պատկանում է «տեղ կա, պետք է ապրել, տեղ կա՝ պետք է մեռնել» խորիժաստ ասացվածքը, նույն այդ հեղինակը մանրապատումներում չի կարողանում լուծել ապրելու և մեռնելու փոխհարաբերության խնդիրը, պատելատ է ընկնում, հակասում իրեն, խճճում իր իսկ մտքերի մեջ: Աչա թե որքան զգալ են տալիս Դեմիքրայանին հին հուշերը:

Այդ հինը միանգամ ևս ուժեղ զգալ է տալիս իրեն «Բնություն» մանրապատումի մեջ:²

«Օրն այսօր դերասանի է նման»—սկսում է իր մանրապատումը Դե-

¹ Դ. Դեմիքրայան, Երկեր, Ա. հատոր, էջ 370:

² Անդ, էջ 364:

միրճյանը ու ապա նկարագրում, թե ինչպես այն մերթ մոռայլվում է, մերթ պայծառանում, մերթ փոթորկում է, մերթ ողբաձայն լաց լինում: «Ներկայացում է կատարյալ»—ավարտում է իր նկարագրությունը Դեմքի ճանը ու ապա դիմում բնությանը հետեւյալ տիրադով.

«Ո՞վ բնություն, ինչ ես զայրանում, գոռում, տանջվում, ծիծաղում, բնչ և խորհում: Դերասան ես գու, խաղ ես խաղում, գերեր զանազան, և ուրիշներին ես ներկայացնում:»

Իսկ դու, ուր ինչ ես, ով ես դու, ինչ է քո իսկական խկությունը: Բաց զեմքդ, ով անհանդիս բնություն:

Դեմքի ճանի այս տիրագը հիշեցնում է մեղ լեռնիդ Անդրեսի «Մարդու կյանքը» գրամայի Գորշաղեստ ոմա-ի խոսքերը, կամ ավելի շուռ՝ հնդկական կրոնա-փիլիսոփայությունը, որից Շոպենի առուելքը սիրում էր իր հայտնի՝ «Աշխարհը իբրև կամք ու մտապատկեր» գրքում մեջքերութմեր անել. «Պա Մայան է, խարուսիկ քող, որ ընկնում է մահկանացուների աչքերին և ցույց տալիս նրանց աշխարհը, որի մասին ոչ կարելի է ասել, թե նա գոյություն ունի, ոչ էլ թե գոյություն չունի, որովհետև երազի է նման այն, նման է արելի փայլին ավազի վրա, որ ճանապարհորդը հեռվից ջրի տեղ է ընդունում, կամ էլ դեն նետած թոկի կտորի, որ նրան օձ է թվում»:¹

Բնությունը քողմարկված է,—ասում է Դեմքի ճանը,—նրա բոլոր արտահայտութմերը ինքը չէ, նա ուրիշին է խաղում, նա մեղ միշտ ենում է զրիմ արած կամ դիմակ ծածկած, նա թաքնում է իր դեմքը, նրա «իսկական իսկությունը» մնում է մեղ անհայտ: Ամեն ինչ լոկ երևույթ է, Մայայի քողը իսկ միջուկը, էռությունը, «ինքնին իրը» մնում է մեղ համար անիմանալի: Բնությունը այն խորհրդավոր գերասանն է, որին մենք տեսնում ենք միայն խաղի, ներկայացման ժամանակ ու որին երբեք չենք հանդիպում փողոցում իր իսկական դիմքով: Ու Դեմքի ճանը, որ մեղ հայտնի «Պառավը» մանրապատումի մեջ նկարագրում էր, թե ինչպես մանկիկն անգամ պարզում է իր թաթիկները, որ բռնի, այսինքն ճանաչի «ծառը, շենքերը, աշխարհը», ուուն այդ Դեմքի ճանը «Բնություն» մանրապատումի մեջ զրկում է մեղ կյանքը, բնությունը, ափեղերը ճանաչելու կարողությունից ու գլորում բոլորիս ազնոստիցիզմի մութ աշխարհը...»

Դեմքի ճանը չի յուրացրել ընկեր Ստալինի հետեւյալ խոսքերը. «Ի հակադրություն իղեալիզմի, որը ժիւառմ է աշխարհի և նրա օրինաչափությունների ճանաչման հնարագորությունը, չի հալատում մեր գիտելիքների ստուգությանը, չի ընդունում օրեկտիվ ճշմարտություն և գտնում է, որ աշխարհը լի է «ինքնին իրերով», որոնց ճանաչել գիտությունը երբեք չի կարող, —մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմը ենում է այն բանից, որ աշխարհը և նրա օրինաչափությունները միանգամայն ճանաչելի են, որ բնության օրինքների վերաբերյալ մեր գիտելիքները, որոնք ստուգված են փորձով, պրակտիկայով, օրեկտիվ ճշմարտությունների նշանակություն ունեցող, ստույգ գիտելիքներ են, որ աշխարհում չկան անձա-

1 Ա. Շավեննապուեր, Աշխարհը իբրև կամք և մտապատկեր (առևերեն) — Պետերբուրգ, 1881, էջ 9:

Նաշէլի իրեր, այլ կան միայն իրեր, որոնք զեռ ճանաչված չեն, որոնք գիտության և պրակտիկայի ուժեղով կրացանայտվեն ու կճանաչվեն»¹

Հ Հետևելով ընկ. Ժղանովին, հարց տանք մեզ հիմա. Կարող էինք մնաք և պթանակել Հայրենական Մեծ պատերազմում, եթե դավանսեինք Դեմքրացիանի՝ աշխարհի անձանաշելիության տեսությունը: Ինարկե, ոչ: Աշխարհը անձանաշելի՞ է: Ապա ինչպես այդ գեպքում մեր տեխնիկան գերազանցեց Գոշիստական տեխնիկային: Աշխարհը անձանաշելի՞ է: Ապա ինչչի վրա ենք այդ գեպքում մենք հիմնում մեր հնգամյա պլանը, կոմունիզմի կառուցումը, միջազգային բարդ քաղաքականությունը: Ի՞նչ է սերկայացնում այդ գեպքում իրենից մարքութենինյան ուսմունքը, մեր սիրելի առաջնորդի, ընկեր Ստալինի նախատեսությունը, սովորական ժողովուրդների մեծ գրականությունը, վերջապես, իր իսկ Դեմքրացիանի ստեղծագործության գերակշռող ու լավագույն մասը:

Ճանաչողությունը սովորական կյանքի հիմքն է, նրա պահուս, ուղն ու ծուծը, Սովետական մարդու առույգությունը, ապադայի նրա հավատը, նրա կենսուրախությունը, նրա խիզախությունը, կամքի գերագույն ճիգեր կատարելու նրա ընդունակությունը, նրա աշխարհահոչակ հերոսականությունը—այս ամենը ենում է մարդու ճանաչողական կարողությունների ապացուցված ու անսահման հնարավորություններից, որը այդպես մանկութեն փորձում է ժիտել—հակասելով իր իսկ ստեղծագործական պրակտիկայի միջուկին—Դեբենիկ Դեմիրճյանը:

Այդպիսով, սիմվոլիզմի ու գեղադանսի բովով անցած Դեմիրճյանը, կյանքից խոռափող ու մահվանից երկնչող, իմացականության վրա թանձր շղարշ ձգող՝ Դեմիրճյանը, մի խոսքով հին Դեմիրճյանը ելնում է նոր, «Սաթո»-ի, «Քաջ Նազարյան»-ի, «Ընկերներ»-ի, «Վարդանանց»-ի լավագույն էջերի ու բազմաթիվ այլ գործերի հեղինակ, զվարիտ ու համարձակ, ժողովրդական իմաստությամբ տոփորված ու սովետական իրականության պահուսի համակված ռեալիստ Դեմիրճյանի զեմ:

Վերիւում ասածից երկում է, որ հին հուշերը երեխն պաշարում են սովետահայ Խոջողագույն գրողին, ու նա՝ ակնհայտ տուրք է տալիս անցյալից եկող սիալներին, իսկ մեր քննադատությունը չկարողացավ օգնել գրողին, զորավիր կանգնել նրան իր ներքին պայքարի պահին, որպեսզի նա կարողանար ազատագրվել հնի մևացորդներից ու վերապրուկներից, այդ չնչին, բայց կպչուն մտքերից, որպնք համառորեն տեղի չեն ուզում տալ այն մեծ նորի առջե, որ կրում է իր մեջ Դեմքրաճյանը և որոնք, հետևապես, ուղղ սահմաններում կասեցնում են նրա ստեղծագործական մտքի թոփեր.

Մեր քննադատության կատարած ամենամեծ գործը այն էր, որ Դեմիքը յանի ոճի տարօրինակությունները—որոնք նույնպիս հին ազգեցություններից են գալիս—նա հայտարարեց քերականական սխալներ, իսկ աջանձ մանրապատռումը առաջարրվեց որպես սովորական հումանիզմ, աշխանային մեռնող ճանանձը հանձնարարվեց որպես սիմվոլ հաղթական գալիքի, սոցիալիստական, շինարարության... Ծիծաղկի է, եթե ցավալի չկինըր: Ո՞վ ասաց, որ ամեն մի կենդանություն կարելի է կյանքի սիմվոլ դարձնել: Դիմակ լափող ճեմուններն ել եռուզենուի մեջ են, շարժվում են,—


¹ Համ. Կաժ, (թ) պարտիայի պատմություն (հայերեն) —Երևան, 1944, էջ 183.


և էթ նըանց էլ դարձնենք կյանքի սիմվոլ։ Ահա թե ինչպես կարող է մաթ գըողը իր հեղինակությամբ զեզօրինությայի ենթարկել միամիտ ընթերցազին, որին ամեն մի տարօրինակություն օրիգինալություն է թվում, ամեն մի հավակնություն՝ խոր աֆորիզմ։

«Ծառայեմ եմ Սովետական Միությանը» — այսպես վերջացրեց Դեմիքճյանը իր ելույթը հոբելյանի օրերին։ Այս, Դեմիքճյանը իսկապես որ ծառայում է Սովետական Միությանը։ Բայց այդ ծառայությունը ժողովը դիմում է առաջարկությունը ու պարտիային առավել վսեմ կլինի ու կատարյալ եթե մեր մեծ հեղինակը ազատվի՝ անցյալի անհարկավոր ըեռից ու միանգամայն նորոգված շարունակի իր գործը։

11/3/668







2047

(A) II
31668

